# Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-25/60-1

ք. Երևան «26» 02 2026թ.

Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա հիմնադրամ, ի դեմս տնօրեն Գ. Քառյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Նաիրա Խաչատրյան Սամվելի Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Ն. Խաչատրյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-25/60 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 40 օրացույցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքներն կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2550000 (երկու միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որից 425000 (չորս հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները (շինհրապարակի կազմակերպումը), որը պետք է գրավոր հավաստված լինի տվյալ օբյեկտի տեխնիկական հսկողությունն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության կողմից:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան հանձման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա հիմնադրամ
ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570013071880800
ՀՎՀՀ 01202364

տնօրեն՝------------------------- Գ. Քարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Նաիրա Խաչատրյան Սամվելի Ա/Ձ
ք. Երևան Կուրղինյան 17շ. բն 11
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2480800025740000
ՀՎՀՀ 28107885

տնօրեն՝------------------------- Ն. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
«26» փետրվարի 2026թ. կնքված
ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-25/60-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | կատարման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 45461100/501 | Թիվ 51 շենքի 401 և 402 սենյակների վերանորոգման աշխատանքների իրականացում համաձայն սույն պայմանագրի և անբաժանելի մաս կազմող հավելվածների | դրամ | 2550000 | 1 | ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք | պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա հիմնադրամ
ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570013071880800
ՀՎՀՀ 01202364

տնօրեն ------------------ Գ. Քառյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Նաիրա Խաչատրյան Սամվելի Ա/Ձ
ք. Երևան Կուրղինյան 17շ. բն 11
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2480800025740000
ՀՎՀՀ 28107885

տնօրեն՝ ------------------ Ն. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1.1
«26» փետրվարի 2026թ. կնքված
ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-25/60-1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
## ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
## /ԹԻՎ 51 ՇԵՆՔԻ 401 և 402 ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/

| հ/հ | Աշխատանքի անվանումը | Չափի միավոր | Աշխատ ծավալը | Միավ արժեքը ՀՀ դրամ | Ընդ արժեքը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | 401 ՍԵՆՅԱԿ | | | | |
| 1 | Լուսատուների ապամոնտաժում | հատ | 3 | 1688 | 5064 |
| 2 | Վարդակների և անջատիչների ապամոնտաժում | հատ | 5 | 203 | 1015 |
| 3 | Էլ. վահանակի ապամոնտաժում | հատ | 1 | 1688 | 1688 |
| 4 | Ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում | կոմպլ | 1 | 1134 | 1134 |
| 5 | Փայտե պատուհանների ապամոնտաժում պատուհանագոգերի հետ միասին | մ² | 4,5 | 2394 | 10773 |
| 6 | Փայտե դռների ապամոնտաժում | մ² | 1,6 | 1350 | 2160 |
| 7 | Կախովի առաստաղի քանդում (փոքր սենյակ) | մ² | 5,5 | 621 | 3415,5 |
| 8 | Փայտե մանրահատակի քանդում | մ² | 15,5 | 622 | 9641 |
| 9 | Փայտե հատակերիզների քանդում | մ | 15 | 14 | 210 |
| 10 | Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի քանդում | մ² | 15,5 | 440 | 6820 |
| 11 | Պատերի վրայից հին գաջի շերտի հեռացում | մ² | 10 | 635 | 6350 |
| 12 | Պատերի մաքրում հին ներկանյութից | մ² | 56 | 378 | 21168 |
| 13 | Պատերի վրայի անցքերի փակում | մ² | 1 | 3848 | 3848 |
| 14 | Ակոսների փորում լարերի համար | մ | 20 | 405 | 8100 |
| 15 | Ակոսների փակում | մ² | 1 | 2768 | 2768 |
| 16 | Մետաղապլաստե պատուհանների տեղադրում բացվող և չբացվող փեղկերով, սպիտակ գույնի, 60մմ հաստութ. բլոկով, ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլ | մ² | 4,5 | 33750 | 151875 |
| 17 | Բարդ փական | հատ | 1 | 10800 | 10800 |
| 18 | Ցանցի տեղադրում բացվող փեղկին | հատ | 1 | 8100 | 8100 |
| 19 | Ներսի պատուհանագոգերի տեղադրում, պլաստմասսե, սպիտակ գույնի, | մ | 2,6 | 3485 | 9061 |
| 20 | Արտաքին պատուհանագոգերի տեղադրում, 20մմ հաստութ. բազալտե սալիկներից | մ² | 0,7 | 16200 | 11340 |
| 21 | Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի իրականացում պատուհանագոգերի տակ | մ² | 2 | 972 | 1944 |
| 22 | Պատուհանների արտաքին շեպերի հերմետիկացում և սվաղում ցեմենտ-ավազե շաղախով | մ | 8,6 | 662 | 5693,2 |
| 23 | Պատերի ջերմամեկուսացում ներսի կողմից 3սմ հաստութ. պենոպլեքսի սալիկներով և երեսապատում գիպսաստվարաթղթե սալերով | մ² | 9,7 | 11480 | 111356 |
| 24 | ՄԴՖ դռան տեղադրում շրջակալների հետ միասին, մուգ կաղնու գույնի | մ² | 1,6 | 32000 | 51200 |
| 25 | Ծխնիների տեղադրում APECS ֆիրմայի կամ համարժեք | հատ | 2 | 2025 | 4050 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 26 | Դռան փականի տեղադրում բռնակների հետ միասին APECS ֆիրմայի կամ համարժեք | կոմպլ | 1 | 16200 | 16200 |
| 27 | Ներքին շեպերի սվաղում գիպսոնիտով, մետաղյա անկյունակների տեղադրումով | մ² | 2 | 4220 | 8440 |
| 28 | Պատերի սվաղում գիպսոնիտով, անկյուններում մետաղյա անկյունակների տեղադրումով | մ² | 10 | 2094 | 20940 |
| 29 | Արմստրոնգ կախովի առաստաղի իրականացում հիմնակմաղքի պատրաստումով (մեծ սենյակ) | մ² | 15,5 | 6615 | 102532,5 |
| 30 | Պատերի մակերևույթների երեսապատում բետոնակոնտակտով | մ² | 48 | 162 | 7776 |
| 31 | Պատերի և շեպերի հարթեցում գիպսոնիտով | մ² | 75 | 2160 | 162000 |
| 32 | Պատերի և շեպերի ծեփամածկում | մ² | 75 | 260 | 19500 |
| 33 | Պատերի և շեպերի նախաներկում | մ² | 75 | 176 | 13200 |
| 34 | Պատերի և շեպերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով | մ² | 75 | 1823 | 136725 |
| 35 | Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի իրականացում հատակների համար | մ² | 15,5 | 2700 | 41850 |
| 36 | Հատակների իրականացում չսահող կերամոգրանիտե սալիկներով | մ² | 15,5 | 9450 | 146475 |
| 37 | Պլաստմասսե հատակերիզների տեղադրում 70մմ | մ | 18,5 | 1485 | 27472,5 |
| 38 | Շեմերի տեղադրում | հատ | 1 | 1890 | 1890 |
| 39 | Ջեռուցման մարտկոցների տեղադրում, ECO AL 500-80-10 տիպի, LAMMIN ֆիրմայի կամ համարժեք. Փականը-գնդիկավոր GIACOMINI ֆիրմայի կամ համարժեք, նյութը՝ բարձրորակ արույր հակակոռոզիոն ծածկույթով, միացման տիպը՝ միաձույլ ընկույզ (ամերիկյան միացում), միացման մասի պահոցի նյութը՝ մետաղական | սեկց | 10 | 6142 | 61420 |
| 40 | Ջեռուցման խողովակների մոնտաժում, Ø1/2″ LAMMIN ֆիրմայի կամ համարժեք | մ | 1 | 3105 | 3105 |
| 41 | Ջեռուցման մարտկոցների վերին և ներքին փականներ LAMMIN ֆիրմայի կամ համարժեք | հատ | 2 | 2430 | 4860 |
| 42 | Կախիչներ ջեռուցման մարտկոցների համար LAMMIN ֆիրմայի կամ համարժեք | կոմպլ | 1 | 5130 | 5130 |
| 43 | Ձևավոր մասեր LAMMIN ֆիրմայի կամ համարժեք | հատ | 8 | 1215 | 9720 |
| 44 | Միացում գործող ցանցին | տեղ | 2 | 756 | 1512 |
| 45 | Մետաղյա խողովակների երկշերտ ներկում | մ² | 1 | 2160 | 2160 |
| | ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ԻՆՏԵՐՆԵՏ | | | | |
| | Պղնձե հաղորդալարերի անցկացում | | | | |
| 46 | 4×10 մմ² | մ | 35 | 3200 | 112000 |
| 47 | 2×4մմ² | մ | 4 | 743 | 2972 |
| 48 | 2×2.5մմ² | մ | 70 | 365 | 25550 |
| 49 | 2×1.5մմ² | մ | 20 | 230 | 4600 |
| 50 | 1×2.5մմ² | մ | 90 | 243 | 21870 |
| 51 | Վարդակների տեղադրում հողանցիչով, զսպանակավոր կոնտակտներով, 4 տեղանոց (3-ը էլեկտրական, 1-ը ինտերնետ՝ 2 բնիկով, յուրաքանչյուր բնիկի համար առանձին լարերով). TITAN Ֆիրմայի կամ համարժեք | կոմպլ | 2 | 14310 | 28620 |
| 52 | Վարդակների տեղադրում հողանցիչով, զսպանակավոր կոնտակտներով, 4 տեղանոց (3-ը էլեկտրական, 1-ը ինտերնետ՝ 1 բնիկով). TITAN Ֆիրմայի կամ համարժեք | կոմպլ | 3 | 12420 | 37260 |
| 53 | Վարդակների տեղադրում հողանցիչով, զսպանակավոր կոնտակտներով, 2 տեղանոց. (սփիչի համար՝ դռան վերևում) TITAN Ֆիրմայի կամ համարժեք | կոմպլ | 1 | 4320 | 4320 |
| 54 | Վարդակների տեղադրում հողանցիչով, զսպանակավոր կոնտակտներով, 1 տեղանոց (օդորակիչի համար՝ պատուհանի վերևում) TITAN Ֆիրմայի կամ համարժեք | հատ | 1 | 2160 | 2160 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 55 | Անջատիչի տեղադրում մեկստեղնավոր, կոնտակտները ազնիվ մետաղից. TITAN Ֆիրմայի կամ համարժեք | հատ | 2 | 2295 | 4590 |
| 56 | Տուփեր վարդակների և անջատիչների համար | հատ | 24 | 203 | 4872 |
| 57 | Բաժանարար տուփի տեղադրում | հատ | 1 | 1013 | 1013 |
| 58 | Պլաստմասսե տուփի տեղադրում փոքր սենյակում, ավտոմատ անջատիչների համար. 6 տեղանոց | հատ | 1 | 3460 | 3460 |
| 59 | Եռաֆազ ավտոմատ անջատիչի տեղադրում պլաստմասսե տուփի մեջ,50Ա. LEGRAND ֆիրմայի կամ համարժեք. | հատ | 1 | 7500 | 7500 |
| 60 | Ավտոմատ անջատիչի տեղադրում փոքր սեն. պլաստմասսե տուփի մեջ,32Ա. LEGRAND ֆիրմայի կամ համարժեք. | հատ | 1 | 2400 | 2400 |
| 61 | Լուսատուների տեղադրում. LED տիպի, սպիտակ լույսերով, 100վտ hզ. (60×60)մմ չափերով. ELEKTRIKA ֆիրմայի կամ համարժեք | հատ | 4 | 15525 | 62100 |
| 62 | Switch 8 տեղանոց, D-Link DGS-1008 D տիպի (պատից կախելու համար անցքերով) | հատ | 1 | 20250 | 20250 |
| 63 | Ինտերնետ լարերի անցկացում. Պղնձե,UTP cat,5E, 24AWG (գոֆրե խողովակներով) | մ | 90 | 338 | 30420 |
| 64 | Պլաստմասսե ճկուն գոֆրե խողովակներ | մ | 15 | 216 | 3240 |
| 65 | Շերտավարագույրների տեղադրում ռեդուկտորով, շերտերը ուղղահայաց, լայն.9սմ. շերտերը հավաքվում են երկու կողմերում միաժամանակ | $մ^2$ | 5 | 6750 | 33750 |
| | ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ | | | | |
| 66 | Ծխի ազդարարման տվիչների տեղադրում առաստաղին. Гранит տիպի | հատ | 3 | 4725 | 14175 |
| 67 | Մոնտաժային մալուխ 4×0.22$մմ^2$ | մ | 20 | 162 | 3240 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ 401 ՍԵՆՅԱԿ | | | | 1 672 843,7 |
| | 402 ՍԵՆՅԱԿ | | | | |
| 1 | Լուսատուների ապամոնտաժում | հատ | 3 | 1688 | 5064 |
| 2 | Վարդակների և անջատիչների ապամոնտաժում | հատ | 4 | 203 | 812 |
| 3 | Էլ. վահանակի ապամոնտաժում | հատ | 1 | 1688 | 1688 |
| 4 | Ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում | կոմպլ | 1 | 1134 | 1134 |
| 5 | Փայտե պատուհանների ապամոնտաժում պատուհանագոգերի հետ միասին | $մ^2$ | 4,5 | 2394 | 10773 |
| 6 | Փայտե դռների ապամոնտաժում | $մ^2$ | 1,6 | 1350 | 2160 |
| 7 | Փայտե մանրահատակի քանդում | $մ^2$ | 16,5 | 622 | 10263 |
| 8 | Փայտե հատակերիզների քանդում | մ | 16 | 14 | 224 |
| 9 | Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի քանդում | $մ^2$ | 16,5 | 440 | 7260 |
| 10 | Պատերի վրայից հին գաջի շերտի հեռացում | $մ^2$ | 10 | 635 | 6350 |
| 11 | Պատերի մաքրում հին ներկանյութից | $մ^2$ | 45 | 378 | 17010 |
| 12 | Պատերի վրայի անցքերի փակում | $մ^2$ | 1 | 3848 | 3848 |
| 13 | Ակոսների փորում լարերի համար | մ | 20 | 405 | 8100 |
| 14 | Ակոսների փակում | $մ^2$ | 1 | 2768 | 2768 |
| 15 | Մետաղապլաստե պատուհանների տեղադրում բացվող և չբացվող փեղկերով, սպիտակ գույնի, 60մմ հաստութ. բլոկով, ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլ | $մ^2$ | 4,5 | 33750 | 151875 |
| 16 | Բարդ փական | հատ | 1 | 10800 | 10800 |
| 17 | Ցանցի տեղադրում բացվող փեղկին | հատ | 1 | 8100 | 8100 |
| 18 | Ներսի պատուհանագոգերի տեղադրում, պլաստմասսե, սպիտակ գույնի, | մ | 2,6 | 3485 | 9061 |
| 19 | Արտաքին պատուհանագոգերի տեղադրում, 20մմ հաստութ. բազալտե սալիկներից | $մ^2$ | 0,7 | 16200 | 11340 |
| 20 | Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի իրականացում պատուհանագոգերի տակ | $մ^2$ | 2 | 972 | 1944 |
| 21 | Պատուհանների արտաքին շեպերի հերմետիկացում և սվաղում | մ | 8,6 | 662 | 5693,2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ցեմենտ-ավազե շաղախով | | | | |
| 22 | Պատերի ջերմամեկուսացում ներսի կողմից 3սմ հաստութ. պենոպլեքսի սալիկներով և երեսապատում գիպսաստվարաթղթե սալերով | մ² | 6 | 11480 | 68880 |
| 23 | ՄԴՖ դռան տեղադրում շրջակալների հետ միասին, մուգ կաղնու գույնի | մ² | 1,6 | 32000 | 51200 |
| 24 | Ծխնիների տեղադրում APECS ֆիրմայի կամ համարժեք | հատ | 2 | 2025 | 4050 |
| 25 | Դռան փականի տեղադրում բռնակների հետ միասին APECS ֆիրմայի կամ համարժեք | կոմպլ | 1 | 16200 | 16200 |
| 26 | Ներքին շեպերի սվաղում գիպսոնիտով, մետաղյա անկյունակների տեղադրումով | մ² | 2 | 4220 | 8440 |
| 27 | Պատերի սվաղում գիպսոնիտով, անկյուններում մետաղյա անկյունակների տեղադրումով | մ² | 10 | 2094 | 20940 |
| 28 | Արմստրոնգ կախովի առաստաղի իրականացում հիմնակմաղքի պատրաստումով | մ² | 16,5 | 6615 | 109147,5 |
| 29 | Պատերի մակերևույթների երեսապատում բետոնակոնտակտով | մ² | 45 | 162 | 7290 |
| 30 | Պատերի և շեպերի հարթեցում գիպսոնիտով | մ² | 60 | 2160 | 129600 |
| 31 | Պատերի և շեպերի ծեփամածկում | մ² | 60 | 260 | 15600 |
| 32 | Պատերի և շեպերի նախաներկում | մ² | 60 | 176 | 10560 |
| 33 | Պատերի և շեպերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով | մ² | 60 | 1823 | 109380 |
| 34 | Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի իրականացում հատակների համար | մ² | 16,5 | 2700 | 44550 |
| 35 | Հատակների իրականացում չսահող կերամոգրանիտե սալիկներով | մ² | 16,5 | 9450 | 155925 |
| 36 | Պլաստմասսե հատակերիզների տեղադրում 70մմ | մ | 16 | 1485 | 23760 |
| 37 | Շեմերի տեղադրում | հատ | 1 | 1890 | 1890 |
| 38 | Ջեռուցման մարտկոցների տեղադրում, ECO AL 500-80-10 տիպի, LAMMIN ֆիրմայի կամ համարժեք. Փականը-գնդիկավոր GIACOMINI ֆիրմայի կամ համարժեք, նյութը՝ բարձրորակ արույր հակակոռոզիոն ծածկույթով, միացման տիպը՝ միաձույլ ընկույզ (ամերիկյան միացում), միացման մասի պահոցի նյութը՝ մետաղական | սեկց | 10 | 6142 | 61420 |
| 39 | Ջեռուցման խողովակների մոնտաժում, Ø1/2″ LAMMIN ֆիրմայի կամ համարժեք | մ | 2 | 3105 | 6210 |
| 40 | Ջեռուցման մարտկոցների վերին և ներքին փականներ LAMMIN ֆիրմայի կամ համարժեք | հատ | 2 | 2430 | 4860 |
| 41 | Կախիչներ ջեռուցման մարտկոցների համար LAMMIN ֆիրմայի կամ համարժեք | կոմպլ | 1 | 5130 | 5130 |
| 42 | Ձևավոր մասեր LAMMIN ֆիրմայի կամ համարժեք | հատ | 8 | 1215 | 9720 |
| 43 | Միացում գործող ցանցին | տեղ | 2 | 756 | 1512 |
| 44 | Մետաղյա խողովակների երկշերտ ներկում | մ² | 1 | 2160 | 2160 |
| | ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ԻՆՏԵՐՆԵՏ | | | | |
| | Պղնձե հաղորդալարերի անցկացում | | | | |
| 45 | 2×4մմ² | մ | 20 | 743 | 14860 |
| 46 | 2×2.5մմ² | մ | 75 | 365 | 27375 |
| 47 | 2×1.5մմ² | մ | 10 | 230 | 2300 |
| 48 | 1×2.5մմ² | մ | 100 | 243 | 24300 |
| 49 | Վարդակների տեղադրում հողանցիչով, զսպանակավոր կոնտակտներով, 4 տեղանոց (3-ը էլեկտրական, 1-ը ինտերնետ՝ 2 բնիկով, յուրաքանչյուր բնիկի համար առանձին լարերով). TITAN Ֆիրմայի կամ համարժեք | կոմպլ | 1 | 14310 | 14310 |
| 50 | Վարդակների տեղադրում հողանցիչով, զսպանակավոր կոնտակտներով, 4 տեղանոց (3-ը էլեկտրական, 1-ը ինտերնետ՝ 1 բնիկով). TITAN Ֆիրմայի կամ համարժեք | կոմպլ | 5 | 12420 | 62100 |
| 51 | Վարդակների տեղադրում հողանցիչով, զսպանակավոր | կոմպլ | 1 | 4320 | 4320 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կոնտակտներով, 2 տեղանոց (Սվիչի համար, դռան վերևում) TITAN Ֆիրմայի կամ համարժեք | | | | |
| 52 | Վարդակների տեղադրում հողանցիչով, զսպանակավոր կոնտակտներով,1 տեղանոց (օդորակիչի համարմ պատուհանի վերևում) TITAN Ֆիրմայի կամ համարժեք | հատ | 1 | 2160 | 2160 |
| 53 | Անջատիչի տեղադրում մեկստեղնավոր, կոնտակտները ազնիվ մետաղից. TITAN Ֆիրմայի կամ համարժեք | հատ | 1 | 2295 | 2295 |
| 54 | Տուփեր վարդակների և անջատիչների համար | հատ | 24 | 203 | 4872 |
| 55 | Բաժանարար տուփի տեղադրում | հատ | 1 | 1013 | 1013 |
| 56 | Միջանցքի վահանակի մեջ ավտոմատ անջատիչի տեղադրում. 32Ա LEGRAND ֆիրմայի կամ համարժեք | հատ | 1 | 2400 | 2400 |
| 57 | Լուսատուների տեղադրում. LED տիպի, սպիտակ լույսերով, 100վտ hq. (60×60)սմ չափերով. ELEKTRIKA ֆիրմայի կամ համարժեք | հատ | 3 | 15525 | 46575 |
| 58 | Switch 8 տեղանոց, D-Link DGS-1008 D տիպի (պատից կախելու համար անցքերով) | հատ | 1 | 20250 | 20250 |
| 59 | Ինտերնետ լարերի անցկացում. Պղնձե,UTP cat,5E, 24AWG (գոֆռե խողովակներով) | մ | 110 | 338 | 37180 |
| 60 | Կոննեկտրներ լարերի համար | տուփ | 1 | 4725 | 4725 |
| 61 | Պլաստմասսե ճկուն գոֆռե խողովակներ | մ | 20 | 216 | 4320 |
| 62 | Շերտավարագույրների տեղադրում ռեդուկտրով, շերտերը ուղղահայաց, լայն.9սմ. շերտերը հավաքվում են երկու կողմերում միաժամանակ | մ$^2$ | 5 | 6750 | 33750 |
| | ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ | | | | |
| 63 | Ծխի ազդարարման տվիչների տեղադրում առաստաղին. Гранит տիպի | հատ | 2 | 4725 | 9450 |
| 64 | Մոնտաժային մալուխ 4×0.22մմ$^2$ | մ | 20 | 162 | 3240 |
| 65 | Շինարարական աղբի տեղափոխում | տն | 4 | 5610 | 22440 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ 402 ՍԵՆՅԱԿ | | | | 1 488 926,7 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 3 161 770,4 |

* Կապալառուն աշխատանքներն իրականացնում է Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա հիմնադրամի տարածքում: Ծավալաթերթում ներառված բոլոր աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բոլոր նյութերը, սարք-սարքավորումները ապահովում է Կապալառուն իր միջոցներով: Անորակ կամ անսարք նյութերն ու սարքավորումները կապալառուն փոխարինում է իր միջոցներով Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում: Կապալառուն պարտավոր է ընթացիկ նորոգման ենթակա տարածքները հանձնել պատվիրատուին մաքուր վիճակում, շահագործման ենթակա վիճակում՝ առանց որևէ ներկերի կամ նյութերի ավելորդ մնացորդների առկայության:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա հիմնադրամ
ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570013071880800
ՀՎՀՀ 01202364

տնօրեն՝ ------------------- Գ. Քարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Նաիրա Խաչատրյան Սամվելի Ա/Ձ
ք. Երևան Կուրղինյան 17շ. բն 11
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2480800025740000
ՀՎՀՀ 28107885

տնօրեն՝ ------------------- Ն. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված թիվ 2*
*«26» փետրվարի 2026թ. կնքված*
*ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-25/60-1 ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | **Թիվ 51 շենքի 401 և 402 սենյակների վերանորոգման աշխատանքներ** | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա հիմնադրամ
ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570013071880800
ՀՎՀՀ 01202364

տնօրեն՝ ____________ Գ. Քարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Նաիրա Խաչատրյան Սամվելի Ա/Ձ
ք. Երևան Կուրղինյան 17շ. բն 11
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2480800025740000
ՀՎՀՀ 28107885

տնօրեն՝ ____________ Ն. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«26» փետրվարի 2026թ. կնքված
ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-25/60-1 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20  թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100/501 | Թիվ 51 շենքի 401 և 402 սենյակների վերանորոգման աշխատանքներ | - | - | 2550000 | 2550000 | 2550000 | 2550000 | 2550000 | 2550000 | 2550000 | 2550000 | 2550000 | 2550000 | 2550000 |
| Ընդամենը՝ | | | 2550000 | | | | | | | | | | | | |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա հիմնադրամ | Նաիրա Խաչատրյան Սամվելի Ա/Ձ |
| ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք | ք. Երևան Կուրղինյան 17շ. բն 11 |
| Ամերիաբանկ ՓԲԸ | Արդշինբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 1570013071880800 | Հ/Հ 2480800025740000 |
| ՀՎՀՀ 01202364 | ՀՎՀՀ 28107885 |
| տնօրեն՝------------------------ Գ. Քարյան | տնօրեն՝------------------------ Ն. Խաչատրյան |
| (ստորագրություն) Կ.S. | (ստորագրություն) Կ.S. |

*Հավելված թիվ 4*
*«____» __________________ 2026թ. կնքված*
*ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-25/60-1 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ____________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ____________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«      » «            » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «      » «                » 20      թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 4.1*
*«____» __________________ 2026թ. կնքված*
*ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-25/60-1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________ (Պատվիրատուի անունը) -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _________________ (Կապալառուի անունը) -ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ___________________________ (պայմանագրի կնքման ամսաթիվը) -ին կնքված N _________________ (պայմանագրի համարը) գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 5*
*«____» ____________________ 20 թ. կնքված*
*ԱԱԳԼ-ԳՀԱՇՁԲ-25/60-1 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________ֆինանսական գործակալի անվանումը______ հայտնում է, որ.

1. ______պատվիրատուի անվանումը____-ի և __կապալառուի անվանումը_____-ի միջև «-----» ____________ 20 թ. Կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և ______կապալառուի անվանումը_______-ի միջև «-----» ____________ 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

______________________________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.